նակներում չեն հիւսուած. բայց և այնպէս ակնե-
րև է, որ Ե. դարում արդէն կար նոյն աւանդու-
թիւնը Ս. Լուսաւորչի՝ անյայտութեան մէջ «անե-
րևութաբար շատ տարիներ» Սեղուհի վերայ ապ-
րելու, անծանօթ կերպիւ վախճանուելու և հովիւ-
ների ձեռքով ամփոփուելու մասին. * Խորենացու
պատմած այդ աւանդութիւնը գրեթէ շատ սակաւ
տարբերութեամբ կրկնում են և ուրիշ մատենա-
գրներ. Յովհաննէս Դրասխանակերտցին Ժ. դա-
րում նոյնը պատմելով, ասում է. Անգիտաբար իմն
թաղեալ ի հովուաց իբր գտեալ զնա ի կարգ
իմն աղքատաց. Ս. Ներսէս Շնորհալին ԺԲ.
դարում իւր վիպասանութեան մէջ այսպէս է հա-
մառօտում յիշեալ աւանդութիւնը.

Հովուապետին անյայտ եղեալ,
Լուսոյն մերոյ լոյսն ամփոփեալ
Ի հովուական դասուց թաղեալ,
Թափառական այր կարծեցեալ,
Զի որք Փրկչին սպասաւորեալ
Նոքա զծառայն ղիտապատեալ.
Որպէս զՄովսէսն անքոյթ եղ-
եալ,
Զի մի՛ պաշտօն զնա առեալ:

---

* Մով. Խոր. Գիրք. Բ: